ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ, փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության նպատակով*

Առարկա՝ Ինֆորմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Լորետա Դովլաթյան

Դպրոց՝ Երևանի Լևոն Արիսյանի անվան թիվ 127 ավագ դպրոց

Ղեկավար՝ Հովհաննիսյան Լ.

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն……3
Գլուխ 1. Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝
փորձի փոխանակման և ուսուցումը առավել հաջողված կազմակերպելու
նպատակով……5
Գլուխ 2. Ուսուցիչների մանկավարժական գործունեության
կատարելագործման հիմնախնդիրները……8
Գլուխ 3. Ուսուցչի գործունեության կատարելագործման
նորագույն տեխնոլոգիաները……14
Եզրակացություն……17
Օգտագործված գրականության ցանկ……17

Ներածություն

Ժամանակակից դպրոցը պահանջ ունի այնպիսի մանկավարժի, ով իր մասնագիտական որակների շնորհիվ կարողանում է հարստացնել ուսուցման և դաստիարակության մեթոդները, ավանդական մեթոդների կողքին լայնորեն կիրառել ժամանակակից փոխներգործուն մեթոդները: Այս հրամայականն իր հետ բերել է նոր, ժամանակի պահանջներին համապատասխան որակի կրթություն ունենալու ձգտումը: Իսկ արդյոք ուսուցչի ինքնակրթությունը բավարար է, որպեսզի վերջինս համապատասխանի կրթական նոր պահանջներին: Սա հարց է, որն հաճախ լսելի է ուսուցչական համայնքում: Կարող ենք վստահաբար ասել, որ ուսուցչի համար գործընկերների հետ համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի:

Օրինակելի փորձը, որը սկսնակ ուսուցիչը կարող է վերցնել ավագ ու փորձառու գործընկերներից, մեծապես նպաստում է, որպեսզի ուսուցիչն արդեն գործնականում պատկերացում կազմի այս կամ այն խնդրո առարկայի վերաբերյալ: Ուստի սովորել սովորեցնելով բանաձևն այստեղ լայն կիրառելի է: Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տեղեկացված են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները: Ստացվում է, որ օրինակելի փորձի փոխանակումը կարող է մոտիվացնել սկսնակ, ոչիմուտ ուսուցիչներին ամեն կերպ գտնել ճանապարհներ նոր հմտություններ ու կարողությունների ձեռքբերման համար:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսուցիչները համագործակցությունը, օրինակելի փորձի փոխամակումն ու փոխանցումը միտված է ուսումնական գործընթացն ավելի հարուստ, բովանդակային ու արդյունավետ դարձնելուն: Համագործակցային գործընթացում ուսուցիչների քննարկումները, կրթական նոր եղանակների վերլուծությունը, խնդրահարույց իրավիճակներից

ելքերի որոնումը միտված է մեկ ընդհանուր նպատակի՝սովորողի համար դասը դարձնել հետաքրքիր և այդպիսով բարձրացնել կրթության որակը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ցանկացած միջավայրում գործընկարային առողջ մթնոլորտը, որը հենված է առողջ համագործակցության, փոխոգնության ու օրինակելի փորձի փոխանցման վրա, անշուշտ խրախուսելի է: Այդպես է նաև կրթական համակարգում: Առողջ ու արդյունավետ գործընկերային միջավայրի հիման վրա նոր հաղթանակներ գրանցելու հանգամանքով է պայմանավորված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ ուսուցիչների արդյունավետ փոխգործակցության կարևորությունը ուսումնական գործընթացն էլ ավելի որակյալ ու հասանելի դարձնելու առումով:

Հետազոտության խնդիրներն են՝

1. իրականացնել հետազոտության հիմնախնդրի վերլուծություն, որոշել նրա մշակվածության աստիճանը մանկավարժության տեսության մեջ և ժամանակակից կրթական պրակտիկայում,

2. բացահայտել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելա-գործման գործընթացում առկա թերություններն ու բացթողումները,

3. ճշգրտել ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման էությունը և չափանիշները և այլն:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել գործունեության տեսությունը, կրթության փիլիսոփայության դրույթները, ուսուցչի մասնագիտական պատրաստության և մասնագիտական գործունեության կատարելագործման վերաբերյալ դասական և ժամանակակից հետազոտությունները, հատկապես ուսուցչին ներկայացվող՝ Ի.Ֆ. Իսաևի, Ա.Ի. Միշչենկոյի, Վ.Ա. Սլաստենինի, Ա. Ա. Վերբիցկու, Մ.Գ. Աստվածատրյանի, Ա.Մ. Մանուկյանի և այլոց կողմից մշակված մասնագիտական պահանջները, ուսուցչի մասնագիտական կայացման, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները:

Գլուխ 1. Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և ուսուցումը առավել հաջողված կազմակերպելու նպատակով

Կրթության պահանջների անցման իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ ՀՀ կրթական համակարգում հաղթանակներն ու պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից;

Բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքային գործընթացում և մասնագիտական զարգացման ընթացում պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ քաղաքացիության հետ, և հետազոտել դրանց սոցիալական ծառայությունը, ժամանակակից մշակույթի հետ դրանց փոխհարաբերությունը, որպես համընդհանուր արժեք՝ խթանել հանդուրժողականությունը, հավասարության խնդիրները, բազմազանությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը:

Այն ուսուցիչները, ովքեր ավելի փորձառու են, տիրապետում են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին: Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են կառուցել արդյունավետ անհատական դասեր և ապահովել շարունակական ուսուցում: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները:

Հենց այստեղ է ծագում անհրաժեշտություն, որ դպրոցում ավելի կայացած ու փորձառու ուսուցիչները ամեն կերպ փորձեն օգնել սկսնակ կամ ոչ փորձառու ուսուցիչներին՝կիսվելով վերջիններիս հետ իրեն մեթոդամանկավարժական գիտելիքներով, տեղեկատվական հոսքերի կառավարման փորձառությամբ:

Այս համատեքստում խրախուսվում է մանկավարժական նորարարությունը: Մանկավարժական նորարարությունը (ինովատիկան) բարդ, բազմաբաղադրիչ, դինամիկ կառուցվածք ունի, որտեղ կարելի է առանձնացնել բովանդակային, անձնային, կազմակերպչական, կառավարչական գործառույթները:

Մանկավարժական նորարարությունը նոր, միջառարկայական ինտեգրված գիտական ուղղություն է, որն արտացոլում է փիլիսոփայական, սոցիալիոգեբանական, տեղեկատվական, մանկավարժական, մեթոդական և այլ ոլորտների ձեռքբերումները՝ լուծելու համար մանկավարժական գիտության և պրակտիկայի առաջ կանգնած ժամանակակից հիմնախնդիրներ : Մանկավարժական նորարարությունը ենթադրում է կրթական տարածքում նորամուծություններին ուղղված գործունեության և մտածողության առանձնահատուկ կազմակերպում կամ դրանց յուրացման, ներդրման ու տարածման գործընթաց: Այն դրսևորվում է կրթության ավանդական համակարգի արդիականացման, փոխակերպման, արդյունավետության ավելացման գործընթացներում:

Մանկավարժական նորարարությունը կարող է դիտարկվել որպես ուսուցման բովանդակության և կրթական գործընթացի կազմակերպական-տեխնոլոգիական հիմքերի նպատակաուղղված փոխակերպում, որն ուղղված է կրթական ծառայությունների որակի, կրթական հաստատությունների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը Նորարարական կրթությունը հիմնված է մի շարք գործընթացների՝

- կրթության ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրման;
- ինտենսիվ գիտահետազոտական գործունեության;
- ուսուցման բովանդակության միջառարկայականության՝ ի տարբերություն ավանդական առարկայական մեկուսացվածության;
- ուսուցման և տնտեսության կարիքների հետ բուհական հետազոտությունների կապի վրա :

Իհարկե, ուսուցիչների հիմնական մասը տիրապետում է իր գործառույթների հիմնական շրջանակին, այդ թվում դասի ընթացքում բովանդակության և նպատակների ներկայացման, անցումային կետերի ազդանշման և հիմնական կետերի ամփոփման առումներով: Այնուամենայնիվ, դա բավական չէ ուսուցման

գործընթացն արդյունավետ ու ստացված համարելու համար: Ուսուցիչը պետք է կարողանա հստակ ներկայացնել մի շարք հիմնական գաղափարների շուրջ իր տեսլականը, ունենա համապատասխան առարկայական բառապաշար, կարողանա կիրառել գործուն հարցադրումներ, որոնք համապատասխանում են դասի ուղղվածությանը:

Ինչպես նշել էինք, ուսուցիչների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը կարելի է դիտարկել ուսումնադաստիարակչական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այս առումով կարևոր ենք համարում նորարար ու նախաձեռնող ուսուցիչների դերը: Վերջիններս պետք է բաց լինեն համագործակցության համար, փորձեն ուղղորդել պակաս փորձառու կադրերին:[1]

Մանկավարժական աշխատողն իրավունք ունի համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով :

Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, ամեն մեկն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով սովորողի շահը: Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կարողունակությունները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար:

Ուստի ուսուցիչներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը: Աշխատանքային միջավայրում յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է պաշտպանել ոչ միայն իր, այլև գործընկերոջ հեղինակությունը: Նա չպետք է նսեմացնի գործընկերներին սաների կամ այլ անձանց ներկայությամբ:

---

[1] Ամիրջանյան Յու. Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ, Ե., 1983թ.:

Գլուխ 2. Ուսուցիչների մանկավարժական գործունեության կատարելագործման հիմնախնդիրները

Այժմ ուսուցիչների մանկավարժական մասնագիտական գործունեության կատարելագործման հարցի վերաբերյալ կան մի շարք տեսական մոտեցումներ, որոնք հիմք են ծառայում նրանց կողմից դասավանդման արվեստի գիտական հիմունքների յուրացման և մասնագիտական կայացման համար: Այս տեսանկյունից առաջնային է դառնում նաև մասնագիտական կրթության տեսության և մեթոդիկայի ուղղությամբ մանկավարժական այնպիսի հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն սկսնակ ուսուցիչների մասնագիտական կայացմանը, մանկավարժական վարպետության ձևավորմանը, նրանց կողմից դասավանդման հիմունքների, ուսուցման սկզբունքների և օրինաչափությունների յուրացմանը, կրթական նոր տեխնոլոգիաների մշակման գործընթացին նրանց մասնակցությանը, որի շնորհիվ էապես կբարձրանա ուսման որակը:

Գաղտնիք չէ, որ սկսնակ ուսուցիչները շատ հաճախ են դիմում աշխատանքային մեծ փորձ ունեցող ուսուցիչներին մեթոդական օգնություն ստանալու համար: Սակայն այսօր պահանջվում է ոչ թե մենթորության միջոցով մեթոդական փորձի ուղղակի փոխանցում, այլ անհրաժեշտ կոմպետենցիաների յուրացում՝ հենվելով մարդակենտրոն կողմնորոշման վրա, որը կարող է իրականացվել միայն հետբուհական մանկավարժական կրթության ընթացքում: Այնուհանդերձ մանկավարժագիտության մեջ տակավին ոչ լիարժեք են ուսումնասիրված դպրոցում ուսուցիչների մասնագիտական կատարելագործման մի շարք տեսանկյուններ՝ ուսուցիչների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման գիտամեթոդական, հոգեբանամանկավարժական և տեխնոլոգիական կողմերի ապահովման հիմնախնդիրը, ուսուցիչների ստեղծագործական ներուժի ակտիվացման, ինքնիրացման և ինքնազարգացման համար պայմանների ստեղծման հիմնախնդիրը:

Անշուշտ, նշված հիմնախնդիրների լուծման հաջողությունը պայմանավորված է բուհում ապագա ուսուցիչների պատրաստման և դպրոցում նրանց մասնագիտական կատարելագործման արդյունավետությամբ:

Սակայն, մեր կարծիքով, դպրոցի զարգացման կառավարման ապահովման համար հրատապ է դառնում ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման այնպիսի տեխնոլոգիաների ներդրումը, որոնք հնարավորություն կտան բարձրացնելու ուսուցչի մասնագիտական գործունեության որակը և կատարելագործելու մանկավարժական վարպետությունը:

Կոմպետենտ մոտեցման և կրթական նոր հարացույցի տեսանկյունից ժամանակակից ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման և մասնագիտական կոմպետենցիաների զարգացման խնդիրները դեռևս լուրջ հետազոտության կարիք ունեն:

Ուսուցչի մասնագիտական, մեթոդական կատարելագործման հիմնախնդրի արմատները գնում են դեպի վաղնջական ժամանակները: Ելնելով ուսուցչի մասնագիտական զարգացման, ինքնակատարելագործման հոգեբանամանկավարժական տեսական դրույթներից և գիտական հիմնավորումներից՝ մենք ուսուցչի մանկավարժական գործունեության կատարելագործումը դիտարկում ենք որպես անընդհատ գործընթաց հետևյալ փուլերով.

Դրդապատճառային-նպատակային փուլում ձևավորվում են ուսուցչի մանկավարժական գործունեություն իրականացնելու պահանջմունք և դրական դրդապատճառ, որոնք նրան մղում են համապատասխան արժեքների յուրացման, սուբյեկտային դիրքորոշման ապահովման, մանկավարժական գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման: Արդյունքը լինում է մանկավարժական գործունեության դրական դրդապատճառների ձևավորումը և մասնագիտական զարգացմանն անձնային իմաստ հաղորդելը: Մասնագիտական գործունեության կատարելագործման բովանդակության և համագործակցության ծրագրի մշակման փուլում իրականանում են մանկավարժական գործունեության հիմունքների, նորմերի, արժեքների յուրացումը: Արդյունքը մանկավարժական հաղորդակցման միջոցներին, դասի

կառավարման սկզբունքներին, գործառույթներին տիրապետումն է, ինքնառեֆլեքսիայի, ինքնագնահատման կարողությունների և կոմպետենցիաների ձևավորումը:

Իմիջի մասնագիտական 'Ես'-հայեցակարգի գիտակցման և յուրացման փուլում ընթանում է ուսուցչի մանկավարժական իմիջի դրդապատճառային, ճանաչողական, գործունային, հուզական, մանկավարժական մշակույթի և մասնագիտական 'Ես-հայեցակարգի' ձևավորումը:

Կազմակերպչական տեխնոլոգիական փուլում ընթանում են մանկավարժական գործունեության կատարելագործման նոր ձևերի ու մեթոդների որոնում, գործունեության ռեֆլեքսիայի իրականացման կարողությունների, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորում:

Գործունեության վերլուծության և արդյունքների գնահատման փուլ: Արդյունքը մանկավարժական մասնագիտական գործունեության և մանկավարժական տեխնիկայի կատարելագործումն է, ուսուցչի մասնագիտական անհատականության ձևավորումը և կայացումը: [2]

Այսինքն, մենք մանկավարժական գործունեությունը համարում ենք ուսուցչի միասնականացված որակների և դրդապատճառային - նպատակային, մտածողա-կան, գործունային, կազմակերպչական-տեխնոլոգիական, հուզական-գնահատող բաղադրիչների ամբողջություն: Հիմնավորվում է, որ կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ինովացիաների արդի պայմաններում ուսուցիչների մասնագիտական զարգացման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության կատարելագործման յուրահատկությունը պայմանավորված է ժամանակակից սոցիալմշակութային դինամիկ իրավիճակով, ուսուցչի մասնագիտական դիրքորոշմամբ և հասարակության զարգացման մեջ իր դերի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ: Հիմք ունենալով այս յուրահատկությունը՝ կարելի է առանձնացնել ուսուցչի մասնագիտական

[2] Մանկավարժություն Յու.Կ. Բաբանսկու խմբագրությամբ, Երևան, 1987թ.:

դիրքորոշումները՝ ուսուցիչ-մասնագետ, ուսուցիչ-պրոֆեսիոնալ, ուսուցիչ-դաստիարակ:

Մասնագիտական դիրքորոշումները՝ որպես անհատական դինամիկ որակներ, ինտեգրում են ուսուցչի գիտակցական ուղղվածությունը, պրոֆեսիոնալ վարքը, անձնային և մասնագիտական արժեքները: Դրանք անմիջականորեն կապված են ուսուցչի անհատական մանկավարժական և մեթոդական մշակույթի զարգացման մակարդակի հետ և համարվում են նրա մանկավարժական արդյունավետ գործունեության գրավականը:

Ուսուցչի մանկավարժական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական վարպետությամբ, որի ձևավորումն սկսվում է բուհում և շարունակվում դպրոցում մանկավարժական բազմամյա գործունեության ընթացքում: Աներկբա է, որ ուսուցիչների մանկավարժական վարպետության կատարելագործման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական միջոցը դպրոցում կազմակերպվող աշխատանքներն են:

Ուսուցչի մասնագիտական կայացման և մանկավարժական գործունեության կատարելագործման գերակա ուղին առարկայական մեթոդական մասնախմբերի աշխատանքն է: Մեթոդական մասնախմբերի խնդիրն է գործընկերների հետ փոխգործակցության միջոցով օգնել ուսուցչին՝ հաղթահարելու դժվարությունները, միջանձնային հարաբերություններում ծագած խնդիրները, մշակել ինքնակրթության ծրագիր, ապահովել մանկավարժական առաջավոր փորձի փոխանցումը:

Ելնելով վերը նշված մոտեցումներից և տեսական բացահայտումներից՝ մենք մշակել ենք ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող մեթոդական աշխատանքների մոդելը և այդ աշխատանքների կառավարման կառուցվածքը:

Ուսուցչին ներկայացվող պահանջների շրջանակներում հիմնավորվում է, որ ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությանը և կատարելագործմանը նպաստում են ինքնավերահսկման, ինքնավերլուծության կարողությունները:

Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման և դրա որակական չափանիշների վերաբերյալ ժամանակակից մոտեցումները մեզ հնարավորություն են տալիս առանձնացնելու այդ գործընթացի արդյունավետության հիմնական միջոցները՝ կառավարչական, տեխնոլոգիական և մեթոդական:

Ուսուցչի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև նրա մանկավարժական հաղորդակցական կարողություններով, որոնց ուսուցիչը տիրապետում է իր մասնագիտական գործունեության, ինքնառեֆլեքսիայի ընթացքում:

Մենք մասնագիտական մանկավարժական կոմպետենտությունը սահմանում ենք որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների և մասնագիտական պատրաստության մակարդակ, որն արտացոլում է այդ պատրաստության համապատասխանության աստիճանը մանկավարժական գործունեությանը և որոշակի չափով հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել սոցիալական, մշակութային և մասնագիտական հարափոփոխ իրավիճակներում: [3]

Հենվելով տարբեր հետազոտողների կողմից ուսուցչի մասնագիտական գործունեության և նրա կառուցվածքային բաղադրիչների վերաբերյալ տրված բնութագրերի և սահմանումների վրա՝ կարծում ենք, որ ուսուցչի մասնագիտական գործունեության արդյունավետությունը կարող է բնութագրվել ըստ կոմպետենցիաների զարգացման մակարդակի, ըստ մասնագիտական պատրաստության մակարդակի, ըստ մանկավարժական մշակույթի ձևավորվածության մակարդակի, ըստ մասնագիտության նկատմամբ անձնային դիրքորոշումների:

Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ժամանակակից տեխնոլոգիաներն ուղղված են նրա հոգեբանամանկավարժական գիտելիքների հարստացմանը և առարկայական պատրաստության

[3] Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Ե.,1980թ.:

կատարելագործմանը: Դա ենթադրում է մանկավարժական մտածողության զարգացում, մանկավարժական վարպետության կատարելագործում, մանկավարժական կարողությունների, հմտությունների (վերլուծման, կանխատեսման, նախագծման, ռեֆլեքսիայի, մոբիլիզացման, զարգացնող, կողմնորոշող, հաղորդակցական, պերցեպտիվ, կազմակերպչական) զարգացում:

Ուսուցիչը իր մասնագիտությանը լավ տիրապետելուց բացի պետք է ընդարձակ գիտելիքներ ունենա նաև հարակից առարկաներից: Ընդհանրապես նա պետք է համակողմանի զարգացած անձնավորություն լինի: Հարակից առարկանեռրի հիմունքների իմացությունը նույնպես ուսուցչի համար պարտադիր է, քանի որ սովորողների հայացքների, համոզմունքների, ընդհանրապես աշխարհայացքի ձևավորումը նաև իրականացվում է միջառարկայական,միջգիտական կապերի միջոցով: Չէ որ այդ կապերն արտահայտում են օբյեկտիվ աշխարհի առարկաները, երևույթների փոխազդեցություններն ու փոխկապվածությունները, դրանց հակասություններն ու հակադրությունները:

Ուրեմն, ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունն ու բազմակողմանի կրթվածությունը և նրա ղեկավարությամբ աշակերտներին դեպի գիտելիքների աշխարհ կողմնորոշումը արդի ժամանակաշրջանում դառնում է հասարակական պետական պահանջ, կենտրոնական հիմնախնդիր, որի լուծումը պայմանավորված է դպրոցի դերը գիտակցող ուսուցիչների բարեխիղճ գործունեությամբ:

Մեր ժամանակների ուսուցիչը ոչ միայն պետք է ունենա հարուստ գիտելիքներ, համակողմանի զարգացվածություն և լայն մտահորիզոն, այլև կարողանա իր այդ ունեցածը դարձնել սովորողների սեփականությունը, անընդհատ համալրել նրանց գիտելիքները, կարողություններն ու հմտույթունները: Այդ հիմնախնդիրը կարելի է լուծել ուսուցման և դաստիարակության գործընթացները օպտիմալացնելու, նոր մեթոդներ հայտնագործելու, հին մեթոդեձրը կատարելագործելու, դրանք կիրառելիս նորին զուգակցելու, ուսուցման տեխնիկական միջոցները լայնորեն օգատգործելու միջոցով:

Գլուխ 3. Ուսուցչի գործունեության կատարելագործման նորագույն տեխնոլոգիաները

Ուսուցիչների մասնագիտական որակավորումը սովորաբար իրագործվում է հատուկ հիմնարկներում: Օրինակ, ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում, մեթոդական միավորումներում, դասախոսությունների ընթերցման միավորումներում, կրթության բարեփոխման կենտրոններում և այլուր:

Ուսուցիչների որակավորումն ընթանում է կոլեկտիվ ձևով, որը սակայն անհրաժեշտ է զուգակցել ինքնակրթությանը: Գիտականորեն ապացուցված է, որ միայն այդ ձևով հնարավոր կլինի լայնացնել ու խորացնել ուսուցչի մտահորիզոն և բարձրացնել նրա մասնագիտական որակավորումը: Որակավորման ընթացքում պետք է լուրջ ուշադրություն դարձնել հումանիստական դաստիարակության տեսությանն ու պրակտիկային: Որովհետև միայն ուսուցիչը կարող է կազմակեորպված, ծրագրավորված ձևով կիրառելով զանազան մեթոդներ ու հնարներ, ձևավորել սովորողների հումանիստական գիտակցությունն ու զգացմունքները: Աճող մարդու համար դա անհետաձգելի անհրաժեշտություն է:

Ուսուցչի ինքնակրթության աշխատանքի կարևոր ուղղություններ կարող են լինել՝

-Ուսումնական նոր ծրագրերի ու դասագրքերի ուսումնասիրությունը, դրանց պահանջների ու առանձնահատկությունների յուրացումը և այդ առանձնահատկություներին ու պահանջներին համապատասխան սեփական իմացության, մտավոր ուժերի անընդհատ զարգացումը:

-Ուսումնական խնդիրների ինքնուրույնաբար լուծումը, լաբորատոր և գործնական աշխատանքների, փորձերի ու վարժությունների կազմակերպումը,

-Ուսուցման տեխնիկական միջոցների յուրացումը, իմացությունը և օգտագործումը:

Թերություններ առկա են ինչպես ուսուցչի գործունեության, այնպես էլ մասնագիտական պատրաստության և վարքի դրդապատճառների մեջ:

Օրինակ՝ գործունեության ոլորտում դրսևորվող թերություններից են՝ դասի կազմակերպման միօրինակությունը, աշակերտների նկատմամբ անհատական մոտեցում չցուցաբերելը, աշակերտների ակտիվությունը չխթանելը, մանկավարժական տակտի պակասը, իր մասնագիտության նկատմամբ հարգանքի պակասը, իր մասնագիտական գործունեության նկատմամբ ոչ բավականաչափ հետաքրքրությունը, հումորի զգացման պակասը: Այդ թերությունների վերացման համար մենք նախանշել ենք մի շարք ուղիներ՝

1. ուսուցչի ստեղծագործական գործունեության խթանում,

2. դասի կառուցվածքի համապատասխանեցումը սովորողների ուսումնառության նպատակներին,

3. սովորողների համար հարմարավետ կրթական միջավայրի ստեղծում,

4. ուսուցչի և աշակերտի համակառավարման ապահովում դասագործընթացում:

Ուսուցչի մտամարզման տեխնոլոգիան ներառում է ուսուցչի մտամարզման տեսակները՝ քեյսեր /իրավիճակային խնդիրներ/, ուղեղային գրոհ, բանավեճ, ստեղծագործական նախագծերի մշակում, ուսուցման ռազմավարությունների մշակում, մասնագիտական զարգացման առաջադրանքներ, և մտամարզման փուլերը՝ ախտորոշում, իմացական ոլորտի տվյալների փաստագրում, գնահատում:[4]

Բարձր որակավորում ստացած ուսուցիչները որպես խորհրդատուներ մասնակցում են մյուս խմբերի հետ աշխատանքների կազմակերպմանը, ինչպես նաև նրանք հաղթահարում են մասնագետ-խորհրդատուի կոչում ստանալու առաջին աստիճանը: Խմբավորումից հետո սկսվում է փաստագրման փուլը, երբ կանխատեսվում, մոդելավորվում, նախագծվում, ծրագրվում, պլանավորվում են աշխատանքները միջին և ցածր մակարդակի որակավորում ստացած խմբերի

[4] Ս. Ա. Մովսիսյան. Դպրոցի կառավարման հիմունքները, Ե., 1980թ.:

հետ. առաջադրվում են հարցաշարեր, թեստեր, խնդիր-իրավիճակներ, որոնց պատասխաններն անպայման հանգում են բանավեճի, բացատրվում, մեկնաբանվում /ինչու, ինչի համար, ինչ մանկավարժական նկատառումով/, քննարկվում են, մտահանգում ու ընդգծում այն կարևոր գաղափարը, որը մանկավարժորեն արդարացված է: Ամփոփումը, եզրահանգումը կատարում է մտամարզողը կամ բարձր, օպտիմալ որակավորում ստացած ուսուցիչներից որևէ մեկը:

Փաստագրման փուլն ավարտելով՝ անցնում են գնահատման փուլին: Այս փուլում ի մի են բերվում արձանագրված գնահատականները, որոնք արձանագրված են անհատական քարտերում, և միջինով գնահատում: Մասնագետ-խորհրդատուն կցվում է ուսուցչին մեկ ամիս նրան մեթոդական և մասնագիտական օգնություն ցուցաբերելու համար՝ նպաստելով տեսական գիտելիքների պրակտիկ յուրացմանը: Մասնագետ- խորհրդատուն ընտրվում է հատուկ ստուգումից, թեստավորումից հետո:

Մասնագետ-խորհրդատուին ներկայացվող թեստերի առաջադրանքների բովանդակության մեջ պետք է ներառվեն կրթական բարեփոխումներում ընդգրկված նորարարությունների և նորամուծությունների մասին հարցեր, որոնց միջոցով բացահայտվում են մասնագետի իմացությունը և դրանց մասին տեղեկացվածությունը: Գործընթացի այդ հատվածը համարվում է ախտորոշման փուլ, որից հետո որոշակիացվում են մասնագետի՝ խորհրդատվական գործունեությամբ զբաղվելու թույլտվության մակարդակները: Մասնագետ-խորհրդատուի համագործակցության տեխնոլոգիայի կիրառման ընթացքում մասնագետ-խորհրդատուն ոչ թե հրապարակավ դիտողություններ և ուղղումներ է անում՝ աշակերտների ներկայությամբ հեղինակա- զրկելով ուսուցչին, այլ նախօրոք պլանավորելով համատեղ գործունեությունը՝ անցկացնում են դասը, ապա դասից հետո վերլուծում կատարած աշխատանքը:

Եզրակացություն

1. Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման տեսական և փորձարարական հետազոտության ընթացքում հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից բացահայտվել, վերլուծվել և համակարգվել են ուսուցչի մասնագիտական կայացման խնդիրները և մանկավարժական գործունեության կատարելագործման միջոցները, ձևերը, մեթոդները, փուլերը, չափանիշները, արդյունքները:

2. Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործումը նպատակաուղղված է նրա ռեֆլեքսիայի, ստեղծագործական մտածողության, մանկավարժական մշակույթի, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորմանը և կրթական գործընթացի որակի բարձրացմանը:

3. Հիմնավորվել են ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ձևերը. առարկայական մեթոդական մասնախմբերի գործունեությունը, կրթական նոր տեխնոլոգիաների և ռազմավարության մշակումը, փորձարկումը, բաց դասերը, մանկավարժական ստեղծագործ աշխատանքը և այլն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ, Ե., 1983թ.:
2. Մանկավարժություն Յու.Կ. Բաբանսկու խմբագրությամբ, Երևան, 1987թ.:
3. Ս. Ա. Մովսիսյան. Դպրոցի կառավարման հիմունքները, Ե., 1980թ.:
4. Ա. Ե. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Ե.,1980թ.: